Կարմիր կիրակին յիրիկուան պատարագ որ կ'ըլնը, էն յիրիկուան մէկ մարդ ուր ախչկան կ'ասը.—Իլի՛, կինա՛ ժամ, մուտ կպը[1]), օխնուկ[2]) կրակ ա՛ռ, բի՛։

Ախչիկ կ'ըլնը տիւս, կ'իրիշկը, կ'տեսնայ՝ էդա քեարէն ճրագի բուխ կ'ըլնը. էդ ախչիկ էլաւ, կինաց էն ումուտով[3]), թի ժեամն ի։

Մտաւ էնդեղ, ճրագ կպուց, դարձաւ, տը կէր, տիւռ էկաւ իրար։ Ախչիկ մնաց էնդեղ. տեսաւ, որ էրկնուց մանանայ իկի. Մհերն էլ առից, կերաւ, ձին էլ, ախչիկն էլ։ Էլ չ'քեաղցացան, մինչիւ տարին թըմրմաւ։ Էն աւուր օր ինչ տարին թըմրմաւ, ախչիկ ճրագ կպուց, ինչ տիւռ բացուաւ, էլաւ տիւս, ճրագ առից, էկաւ տուն։

Խէր էսաց.—Ախչիկ, էսիկ տարին թըմրմաւ, տիւ յի՞ւր[4]) էր կեացի։

Ախչիկ էսաց.—Խէրիկ, չէ՞ ես նիւր կեացի. ճրագ կպուցիր, դարձիր իմ, իսկի չիմ նստիր էնդեղ։

Էսաց.—Էն տուն, ինչ տիւ կեացիր, վո՞վ կէր։

Էսաց.—Մէկ մարդ էր, ուր ձին։

Էսաց.—Էն տռան վերայ ի՞նչ կէր։

Էսաց.—Մէկ կեոքվը[5]) ծառ կէր, էլ բան չ'կէր։

Նուր թարիխ[6]) էրաւ, էսաց.—Էրկնուց մէկ կոլորակ բան կ'կէր, իս կերայ, նեա իս կ'քեաղցանար, նեա էն։

Ախչիկ տարին մնաց քեաղցած, էլ զադ չ'կերաւ, կուշտ էր.—նուր գիցան, թէ Մհերն ը, ուր ձին։

---

[1]) Կպցրու, վառիր [2]) Օրհնած։ [3]) Ցուսով։ [4]) Ո՞ւր։ [5]) Ընկուզի։ [6]) Պատմեց, գովեց։